Պարույր Սևակ

Մայր ու որդի

Նստած հովում ընկուզենու, հագին շորեր հնատարազ՝
Ճախարակ է մայրս մանում: Իր իսկ ցողած լույս ափերով
Բամբասասեր առուն անվերջ քչփչում է, անցնում վռազ՝
Կասկածամիտ թփերի հետ բացատրրվել խուսափելով:
Ես դեռ մանուկ ու, մանկան պես, քաղցրավենու թունդ սիրահար,
Մեր թարեքից, ճարրս հատած, մի կոշտ շաքար եմ գողանում:
Իսկ շաքարը քի՛չ է այնքան - իմանում է մայրրս ահա
Եվ սպառնում հորրս հայտնել - հասկանո՞ւմ եք ինչ է անում...
Աղքատի բախտը բանում է յոթ տարին մեկ - սուտ չի ասված:
Մինչ քրքրված լաչակի տեղ մայրս նորն է գլխին գցում,
Ես մեր կալն եմ ոտքով չափում, որ կամենա եթե աստված՝
Թիվը եթե զույգ վերջանա, ես կին կառնեմ մեր դրացուն:
(Թեպետ և նա՝ մեր դրացին, նշանված է արդեն կարծես -
Հագին ունի ալ մինթանա՝ խշշան փարչա, նախշուն նոր չիթ,
Ու երբ բակ է ելնում հանկարծ և կամ բակից իջնում պարտեզ,
Թվում է, թե որտեղ որ է պիտի թռչի, պիտի կորչի):
Իսկ երբ որ նա՝ նույն դրացին, մայր է դառնում հանկարծակի
(Է՜հ, երևի կենտ վերջացան իմ քայլերը կալ ու արտում),
Ճերմակում է մայրս դանդաղ - նորից փոխում շորն իր հագի,
Իսկ ես՝ արդեն «ուսումնական»՝ սիրո մասին եմ գիրք կարդում...
Ու երբ վարժված «սատանեկան» այդ հրաշքին գիր ու տառի,

Ես կարդում եմ օր ու գիշեր՝ իր բերանով կիսաբացված,
Իր հայացքով զարմացական իմ անգրագետ մայրը բարի
Ինքն է թվում անգիր մի գիրք՝ կիսաբաց ու չկարդացված...
*
Մի կիսաբաց գրքի նման՝ միայն գրված ոչ տառերով,-
Ինձ այսպես է պատկերանում և՛ իմ, և՛ քո մայրը հիմա.
Մի գիրք խորո՛ւնկ, հարո՞ւստ այնքան, որ կարդում ենք մենք դարերով,
Բայց մինչև վերջ չենք հասկանում - լոկ մայր է պետք դրա համար:

X.1955թ.
Մոսկվա